ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-3/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ(ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք.Երևան 03.02.2022թ.
ժամը 17 [00]

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԳՎ ԹԱ վարչության պետ՝ Հ. Մելիքյան (ԳԱՊ),
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԳՎ ԹԱ վարչության ապահովման 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ՝ Է. Համբարձումյան,
ՀՀ ԶՈՒ ԲՀԱ վարչության ՄՇԺԱ բաժնի ավագ սպա, փոխգնդապետ՝ Կ. Ավագյան:
Բացակայում է՝
ՀՀ ԶՈՒ ԲՀԱ վարչության ՄՇԺԱ բաժնի պետ՝ Խ. Խաչատրյանը:
Գնումները համակարգող՝
ՀՀ ՊՆ ԳԿ վարչության գնումների կազմակերպման 1-ին բաժնի գլխավոր մասնագետ Ս. Ներսիսյան:

ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-3/1» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ս. Ներսիսյան)

1. Ներկայացված բողոքը և բողոքի վերաբերյալ կայացված որոշումը քննարկելու և «ՄԵԳԱՄԱՐ» ՍՊԸ-ին անհամապատասխանությունների շտկման մասին ծանուցում ուղարկելու վերաբերյալ մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. **Ներկայացված բողոքը և բողոքի վերաբերյալ կայացված որոշումը քննարկելու և «ՄԵԳԱՄԱՐ» ՍՊԸ-ին անհամապատասխանությունների շտկման մասին ծանուցում ուղարկելու վերաբերյալ մասին.**

(Ս. Ներսիսյան)

1.1 Սույն ընթացակարգի մասով 2021թ. դեկտեմբերի 30-ին «ՄԵԳԱՄԱՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է բողոք: Բողոքաբերը բողոքում նշում է, որ իր կողմից ներկայացված հայտի հավելված 1.2-ը թերի է լրացված՝ լրացված չեն 1.3.3, 4.5, 4.7.2 և 4.7.3 կետերը: «ՄԵԳԱՄԱՐ» ՍՊԸ-ն խնդրել է պարտավորեցնել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-3/1» ծածկագրով մրցույթի հանձնաժողովին անհամապատասխանությունները շտկելու նպատակով, սահմանված կարգով, մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարին՝ նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնել «ՄԵԳԱՄԱՐ» ՍՊԸ-ին, առաջարկելով մինչև կասեցման ավարտը շտկել անհամապատասխանությունները, որից հետո, միայն, հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների նիստ:

Քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ բողոքի մասին հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ, ուստի հաշվի առնելով վերոգրյալը, ընթացակարգը կասեցվել էր, մինչև ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից համապատասխան որոշում կայացնելը:

31.01.2022թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը կայացրել է որոշում՝ համաձայն որի «ՄԵԳԱՄԱՐ» ՍՊԸ-ի կողմից 30.12.2021թ. ներկայացված բողոքը բավարարել մասնակիորեն: 1.Պարտավորեցնել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-3/1» ծածկագրով մրցույթի հանձնաժողովին ընդունել «ՄԵԳԱՄԱՐ» ՍՊԸ-ին անհամապատասխանությունների շտկման մասին ծանուցում ուղարկելու վերաբերյալ որոշում: 2. Բողոքը, գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների նիստ հրավիրելու պահանջի մասով, մերժել:

Հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 31.01.2021թ. կայացված թիվ ԳԲՔԱ-Լ0-2021/121 որոշումը, գնահատող հանձնաժողովը 03.02.2022թ. «Մեգամար» ՍՊԸ-ից անհամապատասխանությունների շտկման մասին ծանուցում ուղարկելու վերաբերյալ որոշում է կայացրել:

1.2 07.02.2022թ. շարունակելով նիստը՝ գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ «Մեգամար» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է պահանջվող շտկումները, որոնք գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-3/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող:

Քանի որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից կայացված որոշման արդյունքում ընտրված մասնակցի փոփոխություն տեղի չի ունեցել, ուստի Գնահատող հանձնաժողովը որոշեց հրապարակել նիստի արդյունքները և անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել: Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-3/1» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) Հ. Մելիքյան

Գնահատող Է. Համբարձումյան

Գնահատող Կ. Ավագյան

Գնումները համակարգող՝ Ս.Ներսիսյան